

ԻՄՈՒՆՈ-ԵՆԴՈՎՐԻՆ ԵՍԲՐԻՈՆԱԼ ՀԱԿԱՌԻՈՒՑՔԱՅԻՆ ՄՈՂՈՒԼՅԱՏՈՐԻՑ ԿԱԽՅԱԼ ԵՆԹԱՍՏԱՄՈՔՍԱՅԻՆ ԳԵՂԶԻ ՆԵՐՉԱՏԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐՆ ԱՌՆԵՏՆԵՐԻ ՄՈՏ ՍՏՐԵՊՏՈՉՈՏՈՑԻՆ ԻՆԴՈՒԿՑՎԱԾ ՇԱՔԱՐԱԽՏԻ ՄՈՂԵԼՈՎ

Արաքսյան Ե.Մ.¹, Մարտիրոսյան Լ.Ն.², Զեյնալդյան Ա.Վ.³, Ապագյան Ս.Ա.³

¹ Երևանի Ս. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի Էնդոկրինալոգիայի ամբիոն Երևան, Հայաստան

² Երևանի Ս. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի փխտաբանական անատոմիայի ամբիոն Երևան, Հայաստան

³ Երևանի Ս. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի գիտահետազոտական կենտրոն Երևան, Հայաստան

Շաքարային դիաբետոս այն հիվանդություններից է, որի պատճառով հաճախ փխտախարում են նաև այլ օրգաններ և դառնում հետևանք՝ պացիենտի հաշմանդամության ու մահացության:

Մեր հետազոտության նպատակն էր՝ առնետների մոտ ստրեպտոզոտոցին (ՍՏՑ)–ինդուկցված շաքարային դիաբետոսի մոդելի վրա ուսումնասիրել Էմբրիոնային հակաուռուցքային մոդուլյատորից կախյալ մեխանիզմների դերը՝ ենթաստամոքսային գեղձի ներգատական ֆունկցիայի վերականգման մեխանիզմներում-β-բջջիների կառուցվածքի և ֆունկցիայի հնարավոր վերականգման տեսակետից:

Լ. Մկրտչյանի կողմից բացահայտված Էմբրիոնային հակաուռուցքային մոդուլյատորը (ԷՅՈՒՄ) ցուցաբերում է իմունոմոդուլյատորի հատկություններ, այդ իսկ պատճառով այն ներդրումային (1 անգամ) ներարկվում է կենդանիներին՝ կանխարգելիչ (նախ ԷՅՈՒՄ և մեկ շաբաթ անց ստրեպտոզոտոցին) և բուժման (ստրեպտոզոտոցին մեկ շաբաթ անց ԷՅՈՒՄ) նպատակներով (1 մլգ/առնետ չափաբաժնով): Երկու շաբաթ հետո որոշվել է ջրի և սննդի ծախսը, կշռի փոփոխությունը, գլյուկոզայի, կորտիզոլի, պրոլակտինի և ինտերլեյկինների (IL-4, IL-6, IL-8) պարունակությունը՝ արյան մեջ, միաժամանակ կատարվել են ենթաստամոքսային գեղձի հյուսվածքաբանական հետազոտություններ, Լանգենցարայան կղզյակների β-բջջիների հաշվարկ, ինչպես նաև՝ ուսումնասիրվել են յարդի, երիկամների և սրտի հյուսվածքի կառուցվածքը:

Ստացված տվյալները ցույց են տվել, որ ստրեպտոզոտոցինով ինդուկցված շաքարախտի դեպքում առնետների մոտ կտրուկ աճում է ջրի ծախսը (3 անգամ), մի փոքր քիչ՝ սննդի օգտագործումը (67%-ով), նշվում է արտահայտված տենդենց՝ առնետների կշռի իջեցման նկատմամբ, արյան մեջ կտրուկ աճում է գլյուկոզի քանակը (3,75 անգամ), այդ թվում՝ յարդում գլիկոզեմի պարունակության իջեցման հաշվին (PAS- ռեակցիա), 3,3 և 1,8 անգամ համապատասխանաբար աճում են կորտիզոլի և պրոլակտինի պարունակությունը, առավել կտրուկ աճում է ցիտոկինների մակարդակը:

Խախտվում է ենթաստամոքսային գեղձի, յարդի, երիկամների, սրտամկանի, ցիտոարխիտեկտոնիկան, ենթաստամոքսում 4 անգամ պակասում են β -բջջիների կղզյակների քանակը: Ստրեպտոզոտոցինով ինդուկցված շաքարախտով առնետների ԷՅՈՒՄ–ի ներարկումն, ավելի շատ բուժման ժամանակ կարգավիճակում և մի փոքր պակաս՝ կանխարգելիչ կարգավիճակում, արյան մեջ կարգավորում է գլյուկոզի մակարդակը, ջրի և սննդի օգտագործումն իջեցնում է կորտիզոլի, պրոլակտինի և ինտերլեյկինների պարունակությունը:

Ենթաստամոքսային գեղձի հյուսվածքաբանական հետազոտությունը վկայում է անարբիկ պրոցեսի զգալի աշխուժացման մասին, ինչն արտահայտվել է Նրա ներգատական ապարատի կառուցվածքային կարգավորման մասին, ներգատական-բջջիների զգալի ավելացմամբ: Ենթաստամոքսային գեղձի կղզյակների բջջիների քանակն աճել է 2 և 3 անգամ՝ համապատասխանաբար կանխարգելիչ և բուժման կարգավիճակներում, չնայած, որ չի հասել Նորմային: Ցույց է տրված ԷՅՈՒՄ–ի նման կարգավորիչ ազդեցությունը՝ յարդի, երիկամի և սրտի կառուցվածքի վրա: Ենթադրվում է, որ ԷՅՈՒՄ–ի ազդեցության ստրեպտոզոտոցինով ինդուկցված շաքարախտի դեպքում, կանխարգելիչ կարգավիճակում, կանխվում է β-բջջիների քայքայումը, մինչդեռ բուժման կարգավիճակում խթանվում է Նրանց Նորագոյացությունը:

OFFICIAL PUBLICATION OF THE YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY